**Հասմիկ Հարությունյան**

# ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶՎԱԴԱՎԱՆԱԿԱՆ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Բանալի բառեր** - էթնոլեզվական դասակարգման մեթոդներ, ծագումնաբանական ազգակցություն, էթնոլեզվաընտանիք, էթնոս, լեզու, կրոն, էթնիկ տարածք, բնակչության տարածք:

Աշխարհի ժողովուրդների ազգաբանական ուսումնասիրությունը պահանջում է գիտական դասակարգում, որի հիմքում ընկած են ազգաբանական և հարակից գիտությունների մեթոդները: Գիտության մեջ ընդունված է աշխարհի բնակչությանը դասակարգել ըստ պատմազգագրական մարզերի, տնտեսամշակութային տիպերի, աշխարհագրական տարածքների, կրոնական պատկանելության, լեզվական, մարդաբանական և այլ հատկանիշների:

Սույն ուղեցույցի նպատակն է ներկայացնել աշխարհի բնակչության պատկերն էթնոլեզվական դասակարգման տեսանկյունից: Ըստ այդմ՝ էթնոսները դասդասված են հիմնական էթնոլեզվաընտանիքներով (ԷԼԸ). հնդեվրոպական, ալթայան, աֆրասիական և այլն[1]: Միաժամանակ փորձում ենք էթնոսներին բնութագրել նաև դավանական տեսանկյունից՝ նշելով էթնոսի մեծագույն մասին բնորոշ կրոնը[2]: Էթնոսների թվաքանակը միտումնավոր չենք ներկայացրել ներքոբերյալ աղյուսակում, ելնելով նրանից, որ դա հաստատուն թիվ չէ, փոփոխվում է մարդահամարից մարդահամար և միշտ չէ, որ կարող է ճիշտ արտացոլել իրականությունը:

Հայտնի է, որ լեզուների ազգակցության բացահայտմամբ պարզվում է էթնոսների ազգակցությունը (կան, իհարկե, բացառություններ): Գիտության մեջ գոյություն ունի լեզուների դասակարգման ձևաբանական և ծագումնաբանական սկզբունք: Ձևաբանական սկզբունքն ազգագրության մեջ չի արժևորվում, քանի որ համաձայն այդ սկբունքի՝ լեզուները դասակարգվում են ըստ քերականական կառուցվածքի, իսկ քերականական կառուցվածքի նմանությունը կամ տարբերությունը դեռ ոչինչ չի ասում լեզուների ազգակցության, ընդհանուր ծագման մասին: Կան քերականական նման կառուցվածք ունեցող լեզուներ, որոնք, սակայն, ազգակից չեն (օրինակ, անգլերենը և պոլինեզական լեզուները) և, ընդհակառակը, կան քերականական տարբեր կառուցվածք ունեցող լեզուներ, որոնք ծագումնաբանորեն ազգակից են (ռուսերեն և բուլղարերեն, անգլերեն և գերմաներեն և այլն):

---

[1] Գիտնականների կողմից առանձնացված էթնոլեզվաընտանիքների թիվը տարբեր է՝ 35, 15, 12 և այլն: Նման բազմակարծությունը պայմանավորված է նրանով, թե ԷԼԸ-ների առանձնացման հիմքում տվյալ մասնագետն ինչ սկզբունք է դնում:

[2] Քանի որ ուղեցույցի նպատակներից մեկն ուսանողներին ընդհանուր պատկերացում տալն է աշխարհի բնակչության դավանական կազմի մասին, նաև նրանց հնարավորությունները, ունակությունները նկատի ունենալով՝ նպատակահարմար ենք գտել չնշել բողոքականության կոնկրետ ուղղությունը: Այս կամ այն կրոնն առաջին անգամ նշելիս գրում ենք ամբողջությամբ, հետագա հաջորդ անգամներում՝ կրճատ:

Ազգագրության համար արժեքավոր է լեզուների դասակարգման ծագումնաբանական սկզբունքը, որի հիմքում ընկած է միևնույն առարկայի, երևույթի, հասկացության անվան հնչյունական համապատասխանությունը տարբեր լեզուներում: Ինչքան շատ են այդ համապատասխանությունները, այնքան առավել ազգակից են լեզուները և դրանցով խոսող ժողովուրդները: ***Սեղան*** բառը գրեթե նույն ձևով է հնչում սլավոնական լեզուներում. ռուսերեն՝ стол, լեհերեն՝ стил, բուլղարերեն՝ стал և այլն, որովհետև սլավոնալեզու ժողովուրդները ծագումնաբանորեն ազգակից են:

Խոսքն այն մասին չէ, որ որևէ լեզվում հայտնաբերվի, օրինակ, стол բառը, բայց ոչ սեղան նշանակությամբ: Անշուշտ, չափազանց զգույշ պետք է լինել՝ չշփոթելու ծագումնաբանական նմանությունները ոչ ազգակից լեզուներից կատարված փոխառությունների հետ: Այն էթնոսները, որոնց միջև բացահայտվում է գոնե հեռավոր ազգակցություն, միավորվում են մեկ ԷԼԸ-ում:

Կան էթնոսներ, որոնք գոնե հեռավոր ազգակից չեն աշխարհի որևէ այլ ժողովրդի: Դրանք կոչվում են մեկուսի էթնոսներ աշխարհի բնակչության էթնոլեզվական համակարգում: Օրինակ, բասկերը (բասկերի և հայերի, բասկերի և աբխազների ազգակցության մասին ու նմանատիպ այլ ենթադրությունները դեռևս գիտական համընդհանուր ճանաչման չեն արժանացել): Մեր օրերում մեկուսի էթնոսների թիվը հետզհետե քչանում է: Հետազոտական նորագույն սկզբունքները հնարավորություն են տվել բացահայտել հեռավոր ազգակցություն այն էթնոսների (լեզուների) միջև, որոնք մի ժամանակ մեկուսի էին: Օրինակ, ճապոնացիները և կորեացիները, որ մի ժամանակ մեկուսի էին համարվում, ինչպես բասկերը, այսօր ընդգրկվում են Ալթայան ԷԼԸ-ի մեջ:

Ներկայացված աղյուսակում էթնոսների հերթական դասավորվածությունն, անշուշտ, որոշակի սկզբունքով է կատարված, որը, սակայն, միշտ չէ, որ պահպանվում է՝ ելնելով ինչ-ինչ հանգամանքներից: Որպես բնակության վայր նշվում է այն երկիրը (կամ երկրները), որտեղ ապրում է տվյալ էթնոսի հիմնական զանգվածը, իսկ շատ հաճախ նշվել են բնակության գրեթե բոլոր երկրները: Երկրների հերթականությունն ընտրված է ըստ տվյալ էթնոսի թվաքանակի նվազման սկզբունքի, որը նույնպես երբեմն անտեսվում է, և առաջինը նշվում է էթնիկ տարածք երկրի անունը[1]: Կրոնների հերթականության հիմքում նույնպես նվազման սկզբունքն է. առաջինը նշվում է այն կրոնը, որ դավանում է տվյալ էթնոսի ամենամեծ հատվածը: Որոշ դեպքերում նշվում է, օրինակ, *կաթոլիկ քրիստոնեություն*, բայց պետք է հաշվի առնել, որ դա ընդամենը բնակության երկրի պետական կրոնն է, իրականում էթնոսն ավանդական հավատալիքների հետևորդ է[2]: Միշտ չէ, որ ԷԼԸ-ում առանձնացրել ենք էթնոլեզվաենթախմբեր (ԷԼԵԽ), նույնիսկ՝ էթնոլեզվախմբեր(ԷԼԽ): Գիտության մեջ տարբեր տեսակետների առկայության պայմաններում նպատակահարմար ենք գտել ներկայացնել աշխարհի բնակչության էթնոլեզվական համակարգի մեր նախընտրած

[1] Պետության անունը երբեմն գրում ենք կարճ, օրինակ, Հայաստան, ոչ թե Հայաստանի Հանրապետություն: Որոշ դեպքերում առաջին անգամ գրում ենք լրիվ անունը, փակագծում՝ հապավումը, հետագայում՝ միայն հապավումը:

[2] *Ավանդական հավատալիքներ* արտահայտությունը գործածել ենք պայմանականորեն: Նկատի ունենք, որ տվյալ ժողովրդի մեջ առավել կենսունակ են բնապաշտական հավատալիքները, կրոնի, այսպես կոչված, վաղնջական ձևերը, օրինակ, տոտեմիզմը և այլն: Նպատակահարմար չենք գտել կոնկրետ նշել, թե տվյալ ժողովրդի մեջ արջի, եղջերուի, թե օրինակ, կենգուրուի պաշտամունքն է ընդունված:

տարբերակը՝ ընդգրկելով ոչ բոլոր, այլ մեր տեսանկյունից ուսանողների համար ամենաընկալելի, մատչելի, համեմատաբար ծանոթ ԷԼԸ-ները, ԷԼԽ-ները, ԷԼԵԽ-ները և, վերջապես, առանձին էթնոսները: Որոշ լեզվանուններ նշում ենք մայրենիով, այնպես, ինչպես հնչում է տվյալ ժողովրդի լեզվով, առանց հայերեն *երեն* ածանցի, օրինակ, հաուսա, օռոմո, թամաշեկ և այլն: Եթե որևէ լեզու մեռած չէ, աղյուսակում, որպես մայրենի, նշում ենք ա՛յդ լեզուն, անկախ նրանից, թե ժողովրդի քանի տոկոսն է այն մայրենի համարում, ինչպես օրինակ, իռլանդերենի և այլ դեպքերում:

Երբեմն նշում ենք նաև հանրահայտ ինքնանունները (էնդոէթնոնիմ), օրինակ՝ փուշտուն, մաջար, սուոմի և այլն: Աստղանիշով (*) նշված են այն էթնիկ հանրությունները, որոնք դիտվում են ոչ թե մեկ էթնոս, այլ ազգակից ժողովուրդների խումբ:

Գիտության մեջ առկա բազմաթիվ կարծիքները, տեսակետները, որ պայմանավորված են հատկապես համեմատական լեզվաբանության մերօրյա ձեռքբերումներով, բնականաբար, անհնարին է լիարժեք արտացոլել ներքոբերյալ աղյուսակում[1]: Մեր կոլեգաների մասնագիտական դիտողությունները պատրաստ ենք ընդունել երախտագիտությամբ:

## ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԷԼԸ

### ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԷԼԽ

### Արևելասլավոնական ԷԼԵԽ

| Էթնոս | Բնակության երկիր / երկրներ | Լեզու | Կրոն |
|---|---|---|---|
| Ռուսներ | Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Բելառուս, Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ), Կանադա | ռուսերեն | ուղղափառ քրիստոնեություն |
| Ուկրաինացիներ | Ուկրաինա, Ռուսաստան, Ղազախստան, Մոլդովա, Լեհաստան, Կանադա, ԱՄՆ | ուկրաիներեն | ուղղափառ քրիստ. |
| Բելառուսներ[2] | Բելառուս, Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Լեհաստան | բելառուսերեն | ուղղափառ քրիստ. |

### Արևմտասլավոնական ԷԼԵԽ

| | | | |
|---|---|---|---|
| Լեհեր | Լեհաստան, Բելառուս, Լիտվա, Ուկրաինա, ԱՄՆ, Գերմանիա | լեհերեն | կաթոլիկ քրիստ. |
| Չեխեր | Չեխիա, ԱՄՆ, Կանադա, Սլովակիա, Գերմանիա | չեխերեն | կաթոլիկ քրիստ. |
| Սլովակներ | Սլովակիա, ԱՄՆ, Չեխիա, Հունգարիա, Սերբիա, Կանադա | սլովակերեն | կաթոլիկ քրիստ. |
| Լուժիչաններ (սերբոլուժիչաններ, սորբեր) | Գերմանիա | լուժիչաներեն | բողոքական քրիստ. |

[1] Նպատակահարմար չենք գտնում սույն ուղեցույցում անդրադառնալ էթնոլեզվաընտանիքների ծագումնաբանական առնչակցություններին վերաբերող տեսություններին:
[2] Նախկինում ընդունված էր *բելոռուսներ* տարբերակը:

## Հարավ-սլավոնական ԷԼԵԽ

| | | | |
|---|---|---|---|
| Բուլղարներ (բուլղարացիներ) | Բուլղարիա, Ուկրաինա, ԱՄՆ, Մոլդովա | բուլղարերեն | ուղղափառ քրիստ. |
| Սերբեր | Սերբիա, Չերնոգորիա (Մոնտենեգրո), Բոսնիա և Հերցեգովինա, Գերմանիա, Ռումինիա, ԱՄՆ | սերբերեն | ուղղափառ քրիստ. |
| Խորվաթներ (հրվաթներ) | Խորվաթիա, Սերբիա, Չերնոգորիա, Բոսնիա և Հերցեգովինա, Գերմանիա, ԱՄՆ, Ավստրիա, Կանադա | խորվաթերեն (սերբո-խորվաթերեն) | կաթոլիկ քրիստ. |
| Մակեդոնացիներ | Մակեդոնիա, Հունաստան, Ավստրիա, ԱՄՆ, Ալբանիա | մակեդոներեն | ուղղափառ քրիստ. |
| Սլովեններ | Սլովենիա, Խորվաթիա, Իտալիա, ԱՄՆ | սլովեներեն | կաթոլիկ քրիստ. |
| Չերնոգորցիներ | Չերնոգորիա, Սերբիա, ԱՄՆ, Ալբանիա | սերբերեն | ուղղափառ քրիստ. |
| Մուսլիմաններ (բոսնիացիներ, բոսնիակներ) | Բոսնիա և Հերցեգովինա, Գերմանիա,Սերբիա, Խորվաթիա, Ավստրիա, Թուրքիա, ԱՄՆ | սերբո-խորվաթերեն | սուննի մահմե-դականու-թյուն |

## ԲԱԼԹԻԱԿԱՆ (ԼԵԹՈԼԻՏՎԱԿԱՆ) ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Լիտվացիներ | Լիտվա, ԱՄՆ, Ռուսաստան, Լատվիա, Կանադա, Լեհաստան, Ուկրաինա | լիտվերեն | կաթոլիկ քրիստ. |
| Լատիշներ | Լատվիա, Ռուսաստան, Լիտվա, ԱՄՆ, Կանադա, Ավստրիա | լատիշերեն | բողոքական քրիստ. |

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Գերմանացիներ | Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Ղազախստան, Ռուսաստան, Բրազիլիա | գերմաներեն | բողոքական և կաթոլիկ քրիստ. |
| Ավստրիացիներ | Ավստրիա, ԱՄՆ, Իտալիա, Գերմանիա, Կանադա | գերմաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Գերմանաշվեյ ցարացիներ | Շվեյցարիա | գերմաներեն | բողոքական քրիստ. |
| Լիխտենշտեյնցի-ներ | Լիխտենշտեյն | գերմաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Լյուքսեմբուրգցի-ներ | Լյուքսեմբուրգ | լյուքսեմ-բուրգերեն | կաթոլիկ քրիստ. |
| Ֆլամանդացիներ | Բելգիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա | Ֆլամանդերեն (Նիդեռլանդերեն) | կաթոլիկ քրիստ. |
| Հոլանդացիներ | Նիդեռլանդներ, ԱՄՆ, Կանադա | նիդեռլանդերեն (հոլանդերեն) | բողոքական քրիստ. |
| Ֆրիզներ | Նիդեռլանդներ, Գերմանիա | ֆրիզերեն | բողոքական քրիստ. |
| Աֆրիկաներներ (բուրեր) | Հարավային Աֆրիկայի Հանրապետություն (ՀԱՀ), Նամիբիա, Զամբիա, ԱՄՆ | աֆրիկաանս | բողոքական քրիստ. |

| | | | |
|---|---|---|---|
| Անգլիացիներ | Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա, ԱՄՆ, Հնդկաստան | անգլերեն | բողոքական քրիստ. |
| Անգլոավստրալա-ցիներ | Ավստրալիա | անգլերեն | կաթոլիկ և բողոքական քրիստ. |
| Անգլոնորզելան-դացիներ | Նոր Զելանդիա | անգլերեն | բողոքական քրիստ. |
| Անգլոկանադացի-ներ | Կանադա | անգլերեն | բողոքական քրիստ. |
| Անգլոամերիկա-ցիներ (ԱՄՆ-ի ամերիկացիներ) | ԱՄՆ | անգլերեն | բողոքական քրիստ. |
| Շվեդներ | Շվեդիա, ԱՄՆ, Կանադա, Ֆինլանդիա, Դանիա, Նորվեգիա | շվեդերեն | բողոքական քրիստ. |
| Նորվեգացիներ | Նորվեգիա, ԱՄՆ, Կանադա, Շվեդիա,Դանիա | նորվեգերեն | բողոքական քրիստ. |
| Իսլանդացիներ | Իսլանդիա, Կանադա, ԱՄՆ | իսլանդերեն | բողոքական քրիստ. |
| Դանիացիներ և այլն[1] | Դանիա, ԱՄՆ, Գերմանիա, Կանադա, Շվեդիա, Նորվեգիա | դանիերեն | բողոքական քրիստ. |

## ԿԵԼՏԱԿԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Իռլանդացիներ | Իռլանդիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ,Կանադա | իռլանդերեն | կաթոլիկ քրիստ. |
| Շոտլանդացիներ[2] | Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա | անգլերեն | բողոքական քրիստ. |
| Գելեր[3] | Մեծ Բրիտանիա | գելերեն | կաթոլիկ քրիստ. |
| Ուելսցիներ (վալիներ) | Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա | ուելսերեն (վալիերեն) | բողոքական քրիստ. |
| Բրետոնացիներ | Ֆրանսիա | բրետոներեն | կաթոլիկ քրիստ. |

## ՌՈՄԱՆԱԿԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Իտալացիներ | Իտալիա, ԱՄՆ, Արգենտինա, Ֆրանսիա, Կանադա, Բրազիլիա | իտալերեն | կաթոլիկ քրիստ. |
| Սարդինացիներ[4] | Իտալիա | սարդիներեն, իտալերեն | կաթոլիկ քրիստ. |
| Իտալաշվեյցարա-ցիներ | Շվեյցարիա | իտալերեն | կաթոլիկ քրիստ. |
| Կորսիկացիներ | Ֆրանսիա | ֆրանսերեն, իտալերեն | կաթոլիկ քրիստ. |
| Ռետոռոմանացիներ* (ֆրիուլներ, լադիններ, ռոմանշիներ) | Իտալիա, Շվեյցարիա | ռետոռոմա-ներեն | բողոքական և կաթոլիկ քրիստ. |

[1] Երբ էթնոսների թվարկումից հետո գրված է *և այլն*, նշանակում է, որ աղյուսակում ներկայացված են այդ էթնոլեզվախմբի կամ ընտանիքի ոչ բոլոր էթնոսները:
[2] Շոտլանդացիներին հաճախ ներառում են Գերմանական ԷԼԽ-ում՝ նկատի ունենալով անգլերեն լեզուն:
[3] Որոշ մասնագետներ գելերին դիտում են ոչ թե առանձին էթնոս, այլ շոտլանդացիների մի հատված:
[4] Որոշ մասնագետներ սարդինացիներին դիտում են որպես իտալացիների մի հատված:

| | | | |
|---|---|---|---|
| Ֆրանսիացիներ | Ֆրանսիա, ԱՄՆ, Իտալիա, Ալժիր, Թունիս, Մարոկկո | ֆրանսերեն | կաթոլիկ քրիստ. |
| Մոնեգասկներ (մոնակցիներ) | Մոնակո | մոնեգասկերեն, ֆրանսերեն | կաթոլիկ քրիստ. |
| Ֆրանկոշվեյցա-րացիներ | Շվեյցարիա | ֆրանսերեն | բողոքական քրիստ. |
| Վալոններ | Բելգիա, Ֆրանսիա, ԱՄՆ | ֆրանսերեն | կաթոլիկ քրիստ. |
| Ֆրանկոկանադա-ցիներ | Կանադա | ֆրանսերեն | կաթոլիկ քրիստ. |
| Հաիթցիներ | Հաիթի | ֆրանսերեն | ավանդական հավատալիք-ներ, կաթ. և բող. քրիստ. |
| Իսպանացիներ | Իսպանիա, Արգենտինա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Ջիբրալթարցիներ | Ջիբրալթար (Մեծ Բրիտանիա) | իսպաներեն, անգլերեն | կաթոլիկ քրիստ. |
| Կուբացիներ | Կուբա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Դոմինիկացիներ | Դոմինիկյան Հանրապետություն | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Մեքսիկացիներ | Մեքսիկա, ԱՄՆ, Կանադա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Գվատեմալացի-ներ | Գվատեմալա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Հոնդուրասցիներ | Հոնդուրաս | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Սալվադորցիներ | Սալվադոր | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Նիկարագուա-ցիներ | Նիկարագուա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Կոստառիկա-ցիներ | Կոստա Ռիկա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Պանամացիներ | Պանամա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Վենեսուելացիներ | Վենեսուելա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Կոլումբիացիներ | Կոլումբիա, Վենեսուելա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Էկվադորցիներ | Էկվադոր, Գերմանիա, ԱՄՆ | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Պերուացիներ | Պերու, ԱՄՆ, Գերմանիա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Բոլիվիացիներ | Բոլիվիա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Չիլիացիներ | Չիլի | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Արգենտինացիներ | Արգենտինա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |

| | | | |
|---|---|---|---|
| Պարագվայցիներ[1] | Պարագվայ, Արգենտինա | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Ուրուգվայցիներ | Ուրուգվայ | իսպաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Կատալոնացիներ | Իսպանիա, Ֆրանսիա, Արգենտինա, Բրազիլիա | կատալաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Անդորրացիներ | Անդորրա | կատալաներեն | կաթոլիկ քրիստ. |
| Պորտուգալա-ցիներ | Պորտուգալիա, Բրազիլիա, ԱՄՆ, Ֆրանսիա | պորտուգալե-րեն | կաթոլիկ քրիստ. |
| Գալիսիացիներ | Իսպանիա, Արգենտինա, Բրազիլիա, Վենեսուելա | գալիսերեն | կաթոլիկ քրիստ. |
| Բրազիլացիներ | Բրազիլիա, Պարագվայ, Արգենտինա | պորտուգալե-րեն | կաթոլիկ քրիստ. |
| Ռումինացիներ | Ռումինիա, Ուկրաինա, ԱՄՆ, Հունգարիա | ռումիներեն | ուղղափառ քրիստ. |
| Մոլդովաններ և այլն | Մոլդովա, Ուկրաինա, Ռուսաստան | մոլդովերեն | ուղղափառ քրիստ. |

## ԻՐԱՆԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Պարսիկներ | Իրան, ԱՄՆ, Իրաք, Աֆղանստան | պարսկերեն (ֆարսի) | շիա մահմեդական. |
| Թաթեր[2] | Ռուսաստան, Ադրբեջան | թաթերեն | շիա մահմեդա-կան., առաքելական քրիստ. |
| Տաջիկներ (թոջիկներ) | Աֆղանստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Ռուսաստան | տաջիկերեն | սուննի մահմեդական. |
| Աֆղաններ (փուշտուններ) | Պակիստան,Աֆղանստան, Իրան, Հնդկաստան | աֆղաներեն (փուշտու) | սուննի մահմե-դական. (կա նաև շիա խումբ) |
| Օսեր | Ռուսաստան, Հարավային Օսեթիա (դե յուրե՝ Վրաստան) | օսերեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ., սուննի մահմեդական. |
| Թալիշներ | Իրան, Ադրբեջան | թալիշերեն | շիա մահմեդական. |
| Գիլյաններ | Իրան | գիլյաներեն | շիա մահմեդական. |
| Մազանդարանց իներ | Իրան | մազանդարա-նի | շիա մահմեդական. |
| Քրդեր (կուրմանջ) | Իրան, Թուրքիա, Իրաք, Սիրիա | քրդերեն | սուննի մահմեդական. |

[1] Որոշ մասնագետներ Հնդկացիական ԵԼԸ-ին պատկանող գուարանիներին են անվանում պարագվայցիներ:
[2] Իրանում ապրող թաթերը դիտվում են որպես իրանական էթնիկ տարբեր հանրությունների խումբ:

| | | | |
|---|---|---|---|
| Եզդիներ[1] | Իրաք, Թուրքիա, Հայաստան, Գերմանիա | էզդիկի[2] | շարֆադինա-կանություն[3] |
| Բելուջներ | Պակիստան, Իրան, Աֆղանստան | բելուջերեն (բալուչի) | սուննի մահմեդական. |
| Լուրեր | Իրան | լուրերեն (լուրի) | շիա մահմեդական. |
| Բախտիարներ և այլն | Իրան | ֆարսի | շիա մահմեդական. |

## ՀՆԴԱՐԻԱԿԱՆ (ՀՅՈՒՍԻՍ-ՀՆԴԿԱԿԱՆ) ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Հինդուստա-նիցներ* | Հնդկաստան | հինդի | հինդուիզմ |
| Բենգալացիներ | Բանգլադեշ, Հնդկաստան | բենգալերեն | սուննի մահմեդական., հինդուիզմ |
| Բիհարներ* | Հնդկաստան | բիհարերեն | հինդուիզմ |
| Փանջաբցիներ | Պակիստան, Հնդկաստան, Աֆղանստան | փանջաբերեն | սուննի մահմեդական., սիկհիզմ, հինդուիզմ |
| Ռաջաստհան-ցիներ | Հնդկաստան, Պակիստան | ռաջաստհաներեն | հինդուիզմ, սուննի մահմ. |
| Հուջարաթցիներ | Հնդկաստան, Պակիստան | հուջարաթերեն | հինդուիզմ սուննի մահմ. |
| Մարաթհիներ | Հնդկաստան | մարաթհիերեն | հինդուիզմ, շիա մահմ. |
| Սինդհեր | Պակիստան, Հնդկաստան | սինդհերեն | սուննի մահմեդական, հինդուիզմ |
| Քաշմիրներ | Հնդկաստան | քաշմիրերեն | սուննի մահմեդական. |
| Օրիաներ | Հնդկաստան | օրիաերեն | հինդուիզմ |
| Ասսամցիներ | Հնդկաստան, Բութան | ասսամերեն | հինդուիզմ |
| Սինհալներ | Շրի Լանկա | սինհալերեն | բուդդայակա-նություն |
| Գնչուներ | Հնդկաստան, Հունգարիա, Սլովակիա, Ռումինիա, Բուլղարիա, Չեխիա, Սերբիա, Ռուսաստան և աշխարհի բազմաթիվ այլ երկրներ | գնչուերեն | ավանդական հավատալիք-ներ, ուղղա-փառ և կաթո-լիկ քրիստ., սուննի մահմ. |
| Նեպալցիներ և այլն | Նեպալ, Հնդկաստան | նեպալերեն | հինդուիզմ |

[1] Որոշ գիտնականներ եզդիներին դիտում են որպես քրդերի մի մաս:
[2] Այսպես են համարում Հայաստանի եզդիները, գրականության մեջ նշված է՝ քրդերեն:
[3] Գրականության մեջ հանդիպող *եզիդիզմ* եզրույթը, որպես եզդիների կրոնի անուն, Հայաստանի եզդիները չեն ընդունում:

## ՆՈՒՐԻՍՏԱՆՅԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Նուրիստանցիներ* (կաֆիրներ) | Աֆղանստան | նուրիստանյան լեզուներ | սուննի մահմեդական. |

## ՄԵԿՈՒՍԻ ԷԹՆՈՍՆԵՐ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԷԼԸ-ՈՒՄ

| | | | |
|---|---|---|---|
| Հայեր | Հայաստան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, աշխարհի շուրջ 100 երկրներ | հայերեն | առաքելական քրիստ., մի փոքր մասը՝ կաթոլիկ քրիստ. |
| Հույներ[1] | Հունաստան, Կիպրոս, ԱՄՆ, Գերմանիա, Կանադա, Ռուսաստան | հունարեն | ուղղափառ քրիստ. |
| Ալբանացիներ | Ալբանիա, Կոսովո | ալբաներեն | սուննի մահմեդական. |

## **ՔԱՐԹՎԵԼՅԱՆ ԷԼԸ**

| | | | |
|---|---|---|---|
| Վրացիներ[2] | Վրաստան, Ռուսաստան, Թուրքիա, Իրան, Ուկրաինա, Ադրբեջան | վրացերեն | ուղղափառ քրիստ., մի մասը՝ սուննի և շիա մահմ. |

## **ԴՐԱՎԻԴՅԱՆ ԷԼԸ**

| | | | |
|---|---|---|---|
| Թելուգուներ (անդհրաներ) | Հնդկաստան | թելուգուերեն | հինդուիզմ |
| Թամիլներ | Հնդկաստան, Շրի Լանկա, Սինգապուր | թամիլերեն | հինդուիզմ |
| Մալայալիներ | Հնդկաստան | մալայալիերեն (մալայալամ) | հինդուիզմ, մի մասը՝ շիա մահմեդակ. |
| Կաննարաներ (կաննադաներ) | Հնդկաստան | կաննադա | հինդուիզմ |
| Թուլուներ | Հնդկաստան | թուլուերեն (թուլուվա) | հինդուիզմ |
| Գոնդեր և այլն | Հնդկաստան | գոնդերեն | հինդուիզմ |

---

[1] Որոշ մասնագետներ առանձնացնում են Հունական ԷԼԽ՝ Կիպրոսի հույներին և որոշ այլ հանրությունների դիտելով որպես առանձին էթնոսներ:

[2] Որոշ մասնագետներ Քարթվելյան ԷԼԸ-ում, բացի վրացիներից, առանձնացնում են ևս երեք ժողովուրդներ՝ մեգրելներ, սվաններ, լազեր (ճաներ), դրանց դիտելով որպես առանձին էթնոսներ, իսկ սվաներենը և զաներենը (մեգրելերենը և լազերենը միասին)՝ որպես առանձին լեզուներ:

## ՈՒՐԱԼԱ-ՅՈՒԿԱԳԻՐՅԱՆ ԷԼԸ

ՖԻՆՆԱ-ՈՒԳՐԱԿԱՆ ԷԼԽ

**Ֆիննական ԷԼԵԽ**

| | | | |
|---|---|---|---|
| Ֆիններ (սուոմիներ) | Ֆինլանդիա, Շվեդիա, ԱՄՆ, Կանադա, Ռուսաստան, Նորվեգիա | ֆիններեն | բողոքական քրիստ. |
| Կարելներ | Ռուսաստան | կարելերեն | ուղղափառ քրիստ. |
| Վեպսեր | Ռուսաստան | վեպսերեն | ուղղափառ քրիստ. |
| Իժորներ | Ռուսաստան, Էստոնիա | իժորերեն | ուղղափառ քրիստ. |
| Էստոնացիներ | Էստոնիա, Ռուսաստան, Շվեդիա, ԱՄՆ, Կանադա | էստոներեն | բողոքական քրիստ. |
| Լիվեր[1] | Լատվիա | լիվերեն | բողոքական քրիստ. |
| Սաամներ (լոպարներ) | Նորվեգիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Ռուսաստան | սաամերեն | բողոքական և ուղղափառ քրիստ. |
| Մարիներ | Ռուսաստան | մարիերեն | ուղղափառ քրիստ. |
| Մորդվաներ | Ռուսաստան | մոկշա, էրզիա | ուղղափառ քրիստ. |
| Ուդմուրտներ | Ռուսաստան | ուդմուրտերեն | ուղղափառ քրիստ. |
| Կոմիներ | Ռուսաստան | կոմի (կոմիզիր-յաներեն) | ուղղափառ քրիստ. |
| Կոմի-պերմյակներ | Ռուսաստան | կոմի-պերմյակե-րեն | ուղղափառ քրիստ. |

**Ուգրական ԷԼԵԽ**

| | | | |
|---|---|---|---|
| Հունգարացիներ (մաջարներ) | Հունգարիա, Ռումինիա, Սլովակիա | հունգարերեն | կաթոլիկ քրիստ. |
| Խանտեր | Ռուսաստան | խանտերեն | ուղղափառ քրիստ. |
| Մանսեր | Ռուսաստան | մանսերեն | ուղղափառ քրիստ. |

ՍԱՄՈԴԻԱԿԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Նենցեր (նենեցներ) | Ռուսաստան | նենեցերեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |
| Էնցեր | Ռուսաստան | էնցերեն (էնեցերեն) | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |

[1] Ցավոք, լիվերն արդեն դասվում են անհետացող էթնոսների շարքին:

| | | | |
|---|---|---|---|
| Նգանասաններ | Ռուսաստան | նգանասաներեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |
| Սելկուպներ | Ռուսաստան | սելկուպերեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |

МԵԿՈՒՍԻ ԷԹՆՈՍ ՈՒՐԱԼԱ-ՅՈՒԿԱԳԻՐՅԱՆ ԷԼԸ-ՈՒՄ

| | | | |
|---|---|---|---|
| Յուկագիրներ | Ռուսաստան | յուկագիրերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |

## ԱԼԹԱՅԱՆ ԷԼԸ

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Թուրքեր | Թուրքիա, Գերմանիա, Բուլղարիա, Կիպրոս, Մակեդոնիա, Հունաստան | թուրքերեն | սուննի մահմեդական. |
| Գագաուզներ | Մոլդովա, Ուկրաինա, Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան | գագաուզերեն | ուղղափառ քրիստ. |
| Ադրբեջանցիներ | Ադրբեջան, Իրան, Ռուսաստան, Վրաստան | ադրբեջա-ներեն[1] | շիա մահմեդական. |
| Թուրքմեններ | Թուրքմենստան, Իրան, Աֆղանստան, Իրաք, Թուրքիա, Սիրիա | թուրքմեներեն | սուննի մահմեդական. |
| Թաթարներ | Ռուսաստան | թաթարերեն | սուննի մահմեդական,, մի մասը՝ ուղղափառ քրիստ. |
| Ղրիմի թաթարներ | Ղրիմ (դե յուրե՝ Ուկրաինա) | ղրիմաթաթա-րերեն | սուննի մահմեդական. |
| Կարաիմներ | Ղրիմ (դե յուրե՝ Ուկրաինա), Լիտվա, Ռուսաստան, Իսրայել | կարաիմերեն | կարաիմիզմ |
| Բաշկիրներ | Ռուսաստան | բաշկիրերեն | սուննի մահմեդական. |
| Չուվաշներ | Ռուսաստան | չուվաշերեն | ուղղափառ քրիստ. |
| Ղարաչայներ | Ռուսաստան | ղարաչայա-բալկարերեն | սուննի մահմեդական. |
| Բալկարներ | Ռուսաստան | ղարաչայա-բալկարերեն | սուննի մահմեդական. |
| Կումիկներ | Ռուսաստան | կումիկերեն | սուննի մահմեդական. |

[1] 1991 թ. Ադրբեջանում որոշում է ընդունվել լեզուն անվանել *թյուրքերեն:*

| | | | |
|---|---|---|---|
| Նողայներ | Ռուսաստան | նողայերեն | սուննի մահմեդական. |
| Ղազախներ | Ղազախստան, Չինաստան, Ուզբեկստան, Ռուսաստան | ղազախերեն | սուննի մահմեդական. |
| Կարակալպա-կներ | Ուզբեկստան, Թուրքմենստան, Ղազախստան | կարակալ-պակերեն | սուննի մահմեդական. |
| Ղրղզներ | Ղրղզստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Ղազախստան | ղրղզերեն | սուննի մահմեդական. |
| Ուզբեկներ | Ուզբեկստան, Աֆղանստան, Տաջիկստան, Ղրղզստան | ուզբեկերեն | սուննի մահմեդական. |
| Ույղուրներ | Չինաստան, Ղազախստան, Ղրղզստան | ույղուրերեն | սուննի մահմեդական. |
| Ալթայներ | Ռուսաստան | ալթայերեն | ուղղափառ քրիստ. |
| Շոռեր | Ռուսաստան | շոռերեն | ավանդ. հավատալիք. |
| Խակասներ | Ռուսաստան | խակասերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Տուվացիներ | Ռուսաստան, Մոնղոլիա, Չինաստան | տուվաերեն | բուդդայակա-նություն (լա-մայականութ-յուն) |
| Թոֆալարներ | Ռուսաստան | թոֆալարերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Յակուտներ | Ռուսաստան | յակուտերեն | ուղղափառ քրիստ. |
| Դոլգաններ և այլն | Ռուսաստան | յակուտերեն | ուղղափառ քրիստ. |

## ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Խալխա-մոնղոլներ | Մոնղոլիա, Ուզբեկստան, Ռուսաստան | խալխա | բուդդայակա-նություն (լամա-յականություն) |
| Օյրաթներ* | Մոնղոլիա, Չինաստան | օյրաթերեն | բուդդայակա-նություն (լամա-յականություն) |
| Կալմիկներ | Ռուսաստան | կալմիկերեն | բուդդայակա-նություն (լամա-յականություն) |
| Բուրյաթներ և այլն | Ռուսաստան, Մոնղոլիա, Չինաստան | բուրյաթերեն | բուդդայակա-նություն (լամա-յականություն) ուղղափառ քրիստ., |

## ՏՈՒՆԳՈՒՍԱ-ՄԱՆՋՈՒՐԱԿԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Մանջուրներ | Չինաստան | մանջուրերեն, չինարեն | բուդդայականություն (լամայականություն), դաոսիզմ (դաոիզմ) |
| Էվենկներ | Ռուսաստան, Չինաստան, Մոնղոլիա | էվենկերեն | ուղղափառ քրիստ. |
| Էվեններ | Ռուսաստան | էվեներեն | ուղղափառ քրիստ. |
| Օռոչներ | Ռուսաստան | օռոչերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Ուդեգեյներ | Ռուսաստան | ուդեգեյերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Նանայներ | Ռուսաստան, Չինաստան | նանայերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Ուլչեր | Ռուսաստան | ուլչերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Օռոկներ և այլն | Ռուսաստան | օռոկերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |

## ԿՈՐԵԱ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ԷԼԽ[1]

| | | | |
|---|---|---|---|
| Կորեացիներ | Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Կորեայի Հանրապետություն | կորեերեն | բուդդայականություն, կոնֆուցիականություն, դաոսիզմ, ավանդական հավատալիքներ |
| Ճապոնացիներ | Ճապոնիա, ԱՄՆ, Բրազիլիա, Պերու, Կանադա, Արգենտինա | ճապոներեն | սինտոիզմ, բուդդայականություն, կաթոլիկ քրիստ. |

## ԷՍԿԻՄՈՍԱ-ԱԼԵՈՒՏՅԱՆ ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Էսկիմոսներ* | ԱՄՆ, Կանադա, Դանիա, Ռուսաստան | էսկիմոսյան լեզուներ | ավանդ. հավատալիք. |
| Ալեուտներ | ԱՄՆ, Ռուսաստան | ալեուտերեն | ուղղափառ քրիստ., ավանդ. հավատալիք. |

[1] Որոշ մասնագետներ առանձնացնում են Կորեա-ճապոնական ԷԼԸ:

## ԱՖՐԱՍԻԱԿԱՆ (ՍԵՄԱ-ՔԱՄԱԿԱՆ) ԷԼԸ

### ՍԵՄԱԿԱՆ ԷԼԽ[1]

| | | | |
|---|---|---|---|
| Հարավ-արևմտյան Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի արաբական տարբեր էթնոս-ներ. օրինակ՝ Եգիպտոսի արաբներ և այլն | Ալժիր, Արևմտյան Սահարա, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Հորդանան, Միացյալ Արաբական Էմիրություններ, Մարոկկո, Մավրիտանիա, Պաղեստին, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քաթար, Քուվեյթ, Օման | համաարա-բական գրական արաբերեն և արաբերենի ազգային տարբերակ-ներ | մեծագույն մասը՝ սուննի մահմեդական., կան նաև քրիստոնյա և այլադավան արաբներ |
| Հրեաներ | ԱՄՆ, Իսրայել և աշխարհի շուրջ 100 երկրներ | եբրայերեն (իվրիտ), իդիշ և մի քանի այլ էթնոլեկտներ | հուդաիզմ |
| Ասորիներ | Իրաք, Իրան, Թուրքիա, Սիրիա և աշխարհի շուրջ 50 երկրներ | ասորերեն | նեստորական, հակոբիկյան, միաբնակ, ուղղափառ քրիստ. |
| Ամհարաներ | Եթովպիա, Էրիթրեա | ամհարերեն (ամարինյա) | միաբնակ քրիստ. |
| Տիգրայներ և այլն | Եթովպիա, Էրիթրեա | տիգրայերեն (տիգրինյա) | միաբնակ և կաթոլիկ քրիստ., սուննի մահմեդ. |

### ԲԵՐԲԵՐԱԿԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Քաբիլներ | Ալժիր, Ֆրանսիա | քաբիլերեն | սուննի մահմեդական. |
| Ռիֆեր | Մարոկկո | ռիֆերեն | սուննի մահմեդական. |
| Թամազիգհտ-ներ | Մարոկկո | թամազիգհտերեն | սուննի մահմեդական. |
| Շլյոհներ | Մարոկկո | շլյոհերեն | սուննի մահմեդական. |
| Թուարեգներ և այլն | Մալի, Բուրկինա Ֆասո, Նիգեր, Ալժիր, Լիբիա | թամաշեկ | սուննի մահմեդական. |

[1] Լեռնային հրեաներին միտումնավոր չենք ներառել այս ԷԼԽ-ում, որովհետև նպատակ ունենք նրանց մանրամասն անդրադառնալ Կովկասի բնակչության էթնոլեզվադավանական նկարագիրը առանձին ներկայացնելիս:

ՉԱԴՅԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Հաուսաներ | Նիգերիա, Նիգեր, Չադ, Գանա, Կամերուն | հաուսա | սուննի մահմեդական. |
| Բադեներ | Նիգերիա | գիդգիդ | սուննի մահմեդական, ավանդ. հավատալիք. |
| Բուրաներ | Նիգերիա, Կամերուն | բուրա | սուննի մահմեդական. |
| Մանդարաներ (վանդալաներ) և այլն | Կամերուն, Նիգերիա, Չադ | մանդարա | սուննի մահմեդական. |

ՔՈՒՇԻԹԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Բեջաներ | Սուդան, Էրիթրեա, Եգիպտոս | տո-բեդաույե | սուննի մահմեդական. |
| Օռոմոներ (գալլաներ) | Եթովպիա, Քենիա | օռոմո | սուննի մահմեդական., միաբնակ, բողոքական և կաթոլիկ քրիստ. |
| Սոմալիներ | Սոմալի, Եթովպիա, Քենիա | սոմալի, արաբերեն | սուննի մահմեդական. |
| Սիդամոներ և այլն | Եթովպիա, Սոմալի, Եմեն | սիդամո | սուննի մահմեդական, միաբնակ, բողոքական և կաթոլիկ քրիստոն. |

## **ՆԻԳԵՐ-ԿՈՐԴՈՖԱՆՅԱՆ ԵԼԸ**

ՆԻԳԵՐ-ԿՈՆԳՈ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Կոնգոներ (բակոնգոներ) | Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն (ԿԴՀ), Անգո-լա, Կոնգո | կոնգո | կաթոլիկ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Իբիբիոներ | Նիգերիա, Կամերուն | իբիբիո | կաթոլիկ քրիստոն. |
| Դուալաներ | Կամերուն | դուալա | կաթոլիկ քրիս-տոն., ավանդ. հավատալիք. |
| Ֆանգեր* | Կամերուն, Գաբոն, Հասարակածային Գվինեա | յաունդե, ֆանգ և այլն | ավանդ. հավա-տալ., կաթոլիկ և բողոքական քրիստ. |
| Լուբաներ (բալուբաներ) | ԿԴՀ, Զամբիա, Տանզանիա, Ռուանդա | լուբա | կաթոլիկ քրիստ., սուննի մահմեդա-կան, ավանդ. հավատալիք. |

| | | | |
|---|---|---|---|
| Ռուանդաներ (բանիառուան-դաներ) | Ռուանդա, ԿԴՀ, Ուգանդա | ռուանդա | կաթոլիկ քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Կիկույուներ | Քենիա | կիկույու | ավանդ. հավա-տալ., կաթոլիկ և բողոքական քրիստ. |
| Նյամվեզիներ (վանիամվեզի-ներ) | Տանզանիա | կինիամվեզի | ավանդ. հավա-տալ., սուննի մահմեդական., կաթոլիկ քրիստ. |
| Սուահիլիներ (վասուահիլի-ներ) | Տանզանիա, ԿԴՀ, Քենիա | կիսուահիլի | սուննի մահմեդական. |
| Մակուաներ | Մոզամբիկ, Մալավի | իմակուա | ավանդ. հավա-տալ., սուննի մահ-մեդական., կաթոլ. և բող. քրիստ. |
| Մալավիներ* | Մալավի, Մոզամբիկ, Զամբիա, Տանզանիա, Զիմբաբվե, ՀԱՀ | մալավի | ավանդական հավատալ., բող. և կաթոլ. քրիստ., սուննի մահմեդական. |
| Շոնաներ (մաշոնաներ) | Զիմբաբվե, Մոզամբիկ, Բոտսվանա, ՀԱՀ | չիշոնա | ավանդ. հավա-տալ., բող. և կաթոլ. քրիստ. |
| Զուլուներ | ՀԱՀ, Լեսոտո, Մոզամբիկ, Սվազիլենդ | զուլու | ավանդ. հավա-տալ., բողոքական քրիստ. |
| Քոսաներ | ՀԱՀ | իսիքոսա | բողոքական քրիստ., ավանդ. հավատալ. |
| Թսվանաներ | ՀԱՀ, Բոթսվանա | սեթսվանա | ավանդ. հավա-տալ., բող. և կաթոլ. քրիստ. |
| Սուտոներ (բասուտոներ) | ՀԱՀ, Լեսոտո, Բոթսվանա | սեսուտո | կաթոլ. և բող. քրիստ., ավանդ. հավատալ. |
| Օվամբոներ | Նամիբիա, Անգոլա | կուանյամա, դոնգա (ամ-բո), գանջելա | բողոքական քրիստ. |
| Հերերոներ | Նամիբիա, Անգոլա, Բոթսվանա, ՀԱՀ | հերերո | բողոքական քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Օվիմբունդուներ | Անգոլա | ումբունդու | կաթոլ և բող. քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Մբունդաներ (մամբունդա-ներ) | Անգոլա, ԿԴՀ, Զամբիա, | մբունդա (չիմբունդա) | կաթոլ և բող. քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Սվազիներ | ՀԱՀ, Սվազիլենդ | սվազի, (իսիսվազի, սվատի) | կաթ. և բող. քրիստ., ավանդ. հավատալիք. |

| | | | |
|---|---|---|---|
| Մոսիներ | Բուրկինա Ֆասո | մորե (մոլե կամ մբրե) | ավանդ. հավատալ., սունի մահմեդական., կաթոլ. և բող. քրիստ. |
| Գրուսիներ* | Գանա, Բուրկինա Ֆասո | գրուսի (գուրումսի կամ գուրունսի) | ավանդ. հավ., սունի մահմ., բող. քրիստ. |
| Տիվեր | Նիգերիա, Կամերուն | տիվ (տիվի կամ մբիտշի) | ավանդ. հավատալ., սունի մահմեդական. |
| Բանդաներ | Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն (ԿԱՀ), ԿԴՀ | բանդա | ավանդ. հավատալ., կաթոլ. և բող. քրիստ. |
| Զանդեներ (ազանդեներ) | ԿԴՀ, Սուդան, ԿԱՀ | զանդե (ազանդե) | ավանդ. հավատալ. |
| Վոլոֆներ | Սենեգալ, Գամբիա, Մավրիտանիա, Մալի | վոլոֆ | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Քիսիներ | Գվինեա, Սիեռա Լեոնե, Լիբերիա | քիսի (գիզի) | ավանդ. հավատալիք. |
| Սերերներ | Սենեգալ, Գամբիա | սերեր | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Ֆուլբեներ | Նիգերիա, Գվինեա, Մալի, Կամերուն, Սենեգալ | ֆուլա (ֆուլֆուլդե) | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Մալինկեներ | Գվինեա, Սենեգալ, Մալի | մալինկե (մանինկա) | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Բամբառաներ | Մալի, Կոտ-դ’Իվուար, Գվինեա, Մավրիտանիա | բամանա | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Սոնինկեներ | Մալի, Սենեգալ, Մավրիտանիա | սոնինկե | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Կռուներ* | Կոտ-դ’Իվուար, Լիբերիա | կռու լեզուներ | ավանդ. հավատալ., կաթոլ. և բող. քրիստ. |
| Էվեներ | Գանա, Տոգո, Նիգերիա | էվե (էվեգբե, աջագբե) | ավանդ. հավատալ., սունի մահմեդական., կաթոլ. և բող. քրիստ. |
| Ականներ* (աշանտիներ, ֆանտիներ) | Գանա, Կոտ-դ’Իվուար, Տոգո, Լիբերիա, Նիգերիա | ական լեզուներ | կաթոլ. և բող. քրիստ. |
| Ֆոներ | Բենին | ֆոն (ֆոնգբե կամ աջագբե) | ավանդ. հավատալ., կաթոլ. և բող. քրիստ. |

| | | | |
|---|---|---|---|
| Յորուբաներ | Նիգերիա, Բենին, Գանա, Տոգո | յորուբա | բողոքական քրիստ., սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Իգբոներ (իբո-ներ) | Նիգերիա, Կամերուն | իգբո | բող. և կաթոլ. քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Իջոներ և այլն | Նիգերիա, Կամերուն | իջո լեզուներ | բող. և կաթոլ. քրիստ., ավանդ. հավատալիք. |

## ԿՈՐԴՈՖԱՆՅԱՆ ԷԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Քոալիբներ* | Սուդան | քոալիբ-մորե լեզուներ | սունի մահմեդական. |
| Տեգալիներ և այլն | Սուդան | տեգալի | սունի մահմեդական. |

## ՆԵՂՈՍԱ-ՍԱՀԱՐՅԱՆ (ՇԱՐԻ-ՆԵՂՈՍՅԱՆ) ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Դինկաներ | Սուդան | դինկա (թոնգջենգ) | ավանդ. հավատալ., սունի մահմեդական., կաթոլ. և բող. քրիստ. |
| Նուերներ | Սուդան, Եթովպիա | տոգ նաաս | ավանդ. հավատալիք. |
| Նուբիացիներ* | Եգիպտոս, Սուդան | նուբիական (նուբա) լեզուներ | սունի մահմեդական. |
| Կալենջիններ* | Քենիա, Տանզանիա, Ուգանդա | արևելա-սուդանյան լեզուներ | ավանդ. հավատալիք. |
| Լուոներ | Քենիա, Տանզանիա | ջոլուո | ավանդ. հավատալ., կաթոլիկ քրիստ., սունի մահմեդա-կան. |
| Մասաիներ | Քենիա, Տանզանիա | մասաի | ավանդ. հավատալիք. |
| Կանուրիներ | Նիգեր, Չադ | կանուրի | ավանդ. հավատալիք. |
| Տուբուներ | Չադ, Նիգեր, Լիբիա | տուբու | սունի մահմեդական. |
| Մոռու-մանգբետուներ* | ԿԴՀ, Ուգանդա, Սուդան | մոռու-մադի, մանգբուտու-էֆե, մանգբետու լեզուներ | ավանդ. հավատալիք. |

| | | | |
|---|---|---|---|
| Բագիրմիներ | Չադ | տար-բարմա | սունի մահմեդական, ավանդ. հավատալիք. |
| Սառաներ | Չադ, ԿԱՀ | սառա | ավանդ. հավատալ., սունի մահմեդական., բողոքական քրիստ. |
| Սոնգայներ* | Նիգեր, Մալի, Բուրկինա- Ֆասո, Նիգերիա, Գանա | սոնգայ լեզուներ | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |
| Ֆուրեր | Սուդան, Չադ | ֆուր (ֆորա, կոնգարա) | սունի մահմեդական., ավանդ. հավատալիք. |

## ՔՈՅՍԱՆՅԱՆ ԵԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Սաներ* (բուշմեններ) | Նամիբիա, Բոթսվանա, Անգոլա, Զիմբաբվե | սան լեզուներ | ավանդ. հավատալ., բող. և կաթոլ. քրիստ. |
| Քոյքոիններ* (հոտենտոտներ) | Բոթսվանա, Նամիբիա, ՀԱՀ | քոյ -քոին լեզուներ | ավանդ. հավատալ., բողոքական քրիստ., |
| Լեռնային դամարաներ և այլն | Նամիբիա | գեմսբոկ նամա | ավանդ. հավատալ., բողոքական քրիստ. |

## ՀՅՈՒՍԻՍ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵԼԸ [1]

ԱԲԽԱԶԱ-ԱԴԸՂԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Աբխազներ | Աբխազիա (դե յուրե՝ Վրաստան) | աբխազերեն | ավանդ. հավատ., ուղղափառ քրիստ., սունի մահմեդական. |
| Աբազներ | Ռուսաստան | աբազերեն | սունի մահմեդական. |
| Ադըղներ | Ռուսաստան | ադըղերեն | սունի մահմեդական. |
| Կաբարդիններ | Ռուսաստան | կաբարդինա -չերքեզերեն | սունի մահմեդական., ուղղափառ քրիստ. |

[1] Հյուսիսկովկասյան ժողովուրդներին առանձին անդրադառնալու նպատակ ունենալով՝ այս աղյուսակում ներկայացրել ենք շատ համառոտ, հատկապես՝ Դաղստանյան ժողովուրդներին:

| | | | |
|---|---|---|---|
| Չերքեզներ և այլն | Ռուսաստան | կաբարդինա-չերքեզերեն | սունի մահմեդական. |

## ՎԱՅՆԱԽԱ-ԴԱՂՍՏԱՆՅԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Չեչեններ | Ռուսաստան | չեչեներեն | սունի մահմեդական. |
| Ինգուշներ | Ռուսաստան | ինգուշերեն | սունի մահմեդական. |
| Ավարներ | Ռուսաստան | ավարերեն | սունի մահմեդական. |
| Լաքեր (լակեր) | Ռուսաստան | լաքերեն | սունի մահմեդական. |
| Դարգիններ | Ռուսաստան | դարգիներեն | սունի մահմեդական. |
| Թաբասարաններ | Ռուսաստան | թաբասարա-ներեն | սունի մահմեդական. |
| Լեզգիներ | Ռուսաստան, Ադրբեջան | լեզգիերեն | սունի մահմեդական. |
| Ագուլներ | Ռուսաստան | ագուլերեն | սունի մահմեդական. |
| Ռուտուլներ | Ռուսաստան, Ադրբեջան | ռուտուլերեն | սունի մահմեդական. |
| Ցախուրներ (ծախուրներ) | Ադրբեջան, Ռուսաստան | ցախուրերեն | սունի մահմեդական. |
| Ուդիներ (ուտիներ) և այլն | Ադրբեջան,Վրաստան, Ռուսաստան | ուդիերեն | առաքելական և ուղղափառ քրիստ. |

## **ՉԻՆ-ՏԻԲԵԹԱԿԱՆ ԵԼԸ**

## ՉԻՆԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Չինացիներ | Չինաստան (ներառյալ՝ Թայվան), Թայլանդ, Ինդոնեզիա, Մալայզիա, Սինգապուր | չինարեն | կոնֆուցիակա-նություն, դաո-սիզմ, բուդդայա-կանություն |
| Հուեյներ (դունգաններ[1]) | Չինաստան | չինարեն | սունի մահմեդական. |

## ՏԻԲԵԹԱ - ԲԻՐՄԱՆԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Տիբեթցիներ | Չինաստան, Հնդկաստան | տիբեթերեն | բուդդայականու-թյուն (լամայակա-նություն) |
| Մյանմաներ (բիրմացիներ) | Մյանմա | բիրմաերեն | բուդդայականու-թյուն |

[1] Որոշ մասնագետների համոզմամբ՝ դունգանները Ղազախստանում և Կենտրոնական Ասիայում ապրող առանձին էթնոս են, որոնք 19-րդ դարի 70-80-ական թվականներին Չինաստանից այնտեղ տեղափոխված հուեյների հիմքի վրա են ձևավորվել:

| | | | |
|---|---|---|---|
| Իցզուներ | Չինաստան | իցզու | ավանդ. հավատալիք. |
| Կարեններ և այլն | Մյանմա, Թայլանդ | կարենյան լեզուներ | բուդդայականություն, բողոքական քրիստ., ավանդ. հավատալիք. |

## ԱՎՍՏՐԱՍԻԱԿԱՆ ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Վիետներ (վիետնամցիներ) | Վիետնամ, ԱՄՆ, Կամբոջա, Թայլանդ, Լաոս | վիետնամերեն | բուդդայականություն, դաոսիզմ, կոնֆուցիականություն, կաթոլ. և բող. քրիստ. |
| Մըոնգներ | Վիետնամ | մըոնգ | բուդդայականություն, կաթոլիկ քրիստ. |
| Քխմերներ (քիմերներ) | Կամբոջա, Վիետնամ, Թայլանդ | քխմերերեն | բուդդայականություն |
| Մոներ | Մյանմա, Թայլանդ | մոներեն | բուդդայականություն, ավանդ. հավատալիք. |
| Սանթալներ | Հնդկաստան | սանթալի | ավանդ. հավատալ., հինդուիզմ |
| Մունդաներ | Հնդկաստան, Բանգլադեշ | մունդարի | ավանդ. հավատալ., հինդուիզմ, կաթոլիկ և բողոքական քրիստ. |
| Սավարաներ | Հնդկաստան | սավարա | ավանդ. հավատալիք. |
| Սենոյներ* | Մալայզիա | սենոյական լեզուներ | ավանդ. հավատալ., սուննի մահմեդական. |
| Սեմանգներ | Մալայզիա, Թայլանդ | սեմանգ | ավանդ. հավատալիք. |
| Մյաոներ | Չինաստան, Վիետնամ, Լաոս, Թայլանդ | մյաո | ավանդ. հավատալ., դաոսիզմ, բուդդայականություն |
| Յաոներ և այլն | Չինաստան, Վիետնամ, Լաոս, Թայլանդ | յաո | ավանդ. հավատալիք. |

## ԹԱՅԱԿԱՆ[1] ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Սիամցիներ (քխոն-թայեր) | Թայլանդ, ԱՄՆ, Սինգապուր | սիամերեն (քխոն-թայ) | բուդդայականություն |
| Լաոներ* (լաոսցիներ) | Թայլանդ, Լաոս, Մյանմա | լաոսերեն (լաոթյաներեն) | բուդդայականություն |

[1] Գրականության մեջ կիրառվում է նաև՝ Կադաի ԷԼԸ:

| | | | |
|---|---|---|---|
| Չժուաններ | Չինաստան | չժուան | ավանդ. հավատալիք. |
| Շաներ | Մյանմա, Թայլանդ, Լաոս | շաներեն | բուդդայակա-նություն, ավանդ. հավատալիք. |
| Լիեր | Չինաստան | լի | ավանդ. հավա-տալ., դաոսիզմ |
| Դուներ (քամեր) | Չինաստան | դուն (քամ) | ավանդ. հավա-տալիք. |
| Սուեր(սուիներ) | Լաոս | լովեն (բոլովեն, ջուրու, ջրու) | ավանդ. հավա-տալ., բուդդայա-կանություն |
| Գելաոներ և այլն | Չինաստան, Վիետնամ | գելաո | ավանդ. հավատալ. |

## ԱՎՍՏՐՈՆԵԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ
### ԻՆԴՈՆԵԶԱԿԱՆ ԽՈՒՄԲ

| | | | |
|---|---|---|---|
| Ճավայացիներ | Ինդոնեզիա | ճավայերեն | սուննի մահմեդական. |
| Սունդեր | Ինդոնեզիա | սունդերեն | սուննի մահմեդական. |
| Մադուրներ | Ինդոնեզիա | մադուրերեն | սուննի մահմեդական. |
| Մալայացիներ | Ինդոնեզիա, Մալայզիա, Թայլանդ, Սինգապուր | մալայերեն | սուննի մահմեդական. |
| Բիսայաներ (վիսայաներ) | Ֆիլիպիններ | բիսայա | կաթոլիկ քրիստոն. |
| Բիքոլներ | Ֆիլիպիններ | բիքոլերեն | կաթոլիկ քրիստոն. |
| Թագալներ | Ֆիլիպիններ | թագալերեն (թագալոգե-րեն) | կաթոլիկ քրիստոն. |
| Իլոքներ | Ֆիլիպիններ | իլոքերեն | կաթոլիկ քրիստոն. |
| Մակասարներ | Ինդոնեզիա | մակասար (տենա) | սուննի մահմեդական. |
| Բուգիսներ (բուգեր) | Ինդոնեզիա | բուգերեն | սուննի մահմեդական. |
| Դայակներ* | Ինդոնեզիա, Մալայզիա | դայակյան լեզուներ | ավանդ. հավատալ., կաթոլ. և բող. քրիստ., սուննի մահմեդական. |
| Մինանգկաբաուներ | Ինդոնեզիա | մինանգկաբ աու | սուննի մահմեդական. |
| Աէտաներ* | Ֆիլիպիններ | աէտա | ավանդ. հավատալ., կաթոլ. և բող. քրիստ. |
| Բալիացիներ | Ինդոնեզիա | բալիերեն | հինդուիզմ |

| | | | |
|---|---|---|---|
| Բանջարներ | Ինդոնեզիա, Մալայզիա | մալայերեն | սունի մահմեդական. |
| Իֆուգաոներ | Ֆիլիպիններ | իֆուգաո | ավանդ. հավատալ., կաթոլ. և բող. քրիստ. |
| Մալգաշներ (մալագասիներ) և այլն | Մադագասկար | մալգաշերեն | ավանդ. հավատալ., կաթոլ. և բող. քրիստ., սունի մահմեդական. |

## ՄԵԼԱՆԵԶԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Ֆիջի (ֆիջիացի-ներ), Նոր Կալեդոնիա (կանակներ) և Սողոմոնի կղզեխմբերի բնակիչներ, Վանուատու, Պապուա Նոր Գվինեա պետու-թյունների մելանե-զական էթնիկ հանրություններ | Ֆիջի, Սողոմոնի կղզիներ, Վանուատու, Պապուա Նոր Գվինեա, Նոր Կալեդոնիա (Ֆրանսիա) | մելանեզա-կան լեզուներ | կաթոլ. և բող. քրիստ., ավանդ. հավատալիք. |

## ՄԻԿՐՈՆԵԶԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Չամոռոներ | Մարիանյան կղզիներ (Միավորված ազգերի կազմա-կերպություն (ՄԱԿ), կառ. երկ. ԱՄՆ) | չամոռո | կաթոլիկ քրիստոն. |
| Բելաուներ | Պալաու | բելաու (պալաու) | կաթոլ. և բող. քրիստ. |
| Տռուկներ | Կարոլինյան կղզիներ (ՄԱԿ, կառ. երկ. ԱՄՆ) | տռուկ | բող. և կաթոլ. քրիստ. |
| Մարշալցիներ և այլն | Մարշալյան կղզիներ (ՄԱԿ, կառ. երկ. ԱՄՆ) | մարշալերեն | կաթոլ. և բող. քրիստ. |

## ՊՈԼԻՆԵԶԱԿԱՆ ԵԼԽ

| | | | |
|---|---|---|---|
| Մաորիներ | Նոր Զելանդիա | մաորի | բող. և կաթոլ. քրիստ. |
| Սամոացիներ (սամոաներ) | Արևմտյան Սամոա, Նոր Զելանդիա, Արևելյան Սամոա (ԱՄՆ) | սամոա | բող. և կաթոլ. քրիստ. |
| Թաիթցիներ (մաոխներ) | Թաիթի (Ֆրանսիա) | թաիթերեն (Նոր թաի-թերեն) | բող. և կաթոլ. քրիստ. |

| | | | |
|---|---|---|---|
| Տոնգացիներ | Տոնգա, Նոր Զելանդիա | տոնգա | բող. և կաթոլ. քրիստ. |
| Հավայացիներ | ԱՄՆ | հավայերեն | բող. և կաթոլ. քրիստ. |
| Ռապանուիներ և այլն | Զատկի (Ռապանուի) կղզի (Չիլի) | ռապանուի | կաթոլիկ քրիստոն. |

## ՊԱՊՈՒԱՍԱԿԱՆ[1] ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Էնգաներ | Ինդոնեզիա | էնգանո | սուննի մահմեդա-կան., բող. և կաթոլ. քրիստ. |
| Դուգում-դանիներ (դանիներ) | Ինդոնեզիա | դանի | բող. և կաթոլ. քրիստ. |
| Ասմաթներ | Պապուա Նոր Գվինեա | ասմաթ | բող. և կաթոլ. քրիստ. |
| Մարինդ-անիմներ | Արևելյան Թիմոր | մարինդ | կաթոլիկ քրիստոն. |
| Բոնգուներ | Պապուա Նոր Գվինեա | բոնգու | բողոքական քրիստ. |
| Խագեններ և այլն | Պապուա Նոր Գվինեա | խագեն | բող. և կաթոլ. քրիստ. |

## ՀՆԴԿԱՑԻԱԿԱՆ[2] ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Ատապասկներ* | ԱՄՆ, Կանադա | ատա-պասկյան լեզուներ | բող. և կաթոլ. քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Ալգոնկիներ* | ԱՄՆ, Կանադա | ալգոնկին-յան լեզու-ներ | կաթոլիկ քրիս-տոն., ավանդ. հավատալիք. |
| Իրոկեզներ* | ԱՄՆ, Կանադա | իրոկեզյան լեզուներ | բող. և կաթոլ. քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Դակոտաներ | ԱՄՆ, Կանադա | դակոտա (սիու) | բող. և կաթոլ. քրիստ., ավանդ. հավատալիք. |
| Մայաներ* | Մեքսիկա, Գվատեմալա, Հոնդուրաս, Սալվադոր, Բելիզ | մայա լեզուներ | կաթոլիկ քրիս-տոն., ավանդ. հավատալիք. |
| Ացտեկներ (նաուաներ) | Մեքսիկա | ացտեկերեն (նաուատլ) | կաթոլիկ քրիս-տոն., ավանդ. հավատալիք. |
| Օտոմիներ | Մեքսիկա | օտոմ | կաթոլ. և բող. քրիստ. |

[1] Այսպես անվանենք պայմանականորեն: Պապուասական շուրջ 700 էթնոսներին գիտնականները միավորում են մեկ տասնյակից ավելի ԷԼԸ-ների մեջ:
[2] Այսպես անվանենք պայմանականորեն: Հնդկացիական էթնոսներին գիտնականները միավորում են մի քանի ԷԼԸ-ների մեջ:

| | | | |
|---|---|---|---|
| Միշտեկներ | Մեքսիկա | միշտեկ | կաթոլիկ քրիստոն. |
| Սապոտեկներ | Մեքսիկա | սապոտեկ | կաթոլիկ քրիստոն. |
| Կեչուաներ | Պերու, Էկվադոր, Չիլի, Բոլիվիա, Արգենտինա, | կեչուա | կաթոլիկ քրիստոն. |
| Այմարաներ | Բոլիվիա, Պերու, Չիլի | այմարա | կաթոլիկ քրիստոն. |
| Առաուկաններ | Չիլի, Արգենտինա | առաուկան (մապուչե) | կաթոլիկ քրիստոն., ավանդ. հավատալիք. |
| Յագաններ (յամաններ) | Չիլի, Արգենտինա | յագան (յաման) | կաթոլիկ քրիստոն., ավանդ. հավատալիք. |
| Օնաներ [1] | Արգենտինա, Չիլի | օնա | ավանդ. հավատալիք. |
| Առավակներ* | Բոլիվիա, Վենեսուելա, Հաիթի, Կուբա | առավա-կյան լեզուներ | ավանդ. հավատալիք. |
| Տուպի-գուարանիներ* | Բոլիվիա, Բրազիլիա, Պերու, Պարագվայ | տուպի-գուարանի լեզուներ | ավանդ. հավատալիք., բողոքական քրիստ. |
| Չիբչաներ* | Կոլումբիա, Նիկարագուա, Պանամա, Կոստա Ռիկա, Հոնդուրաս | չիբչա լեզուներ | ավանդ. հավա-տալիք., կաթոլիկ քրիստոն. |
| Կարիբներ* և այլն | Վենեսուելա, Կոլումբիա, Բրազիլիա, Պերու | կարիբյան լեզուներ | ավանդ. հավա-տալ., կաթոլիկ քրիստոն. |

## ԱՎՍՏՐԱԼԱԿԱՆ[2] ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Առանդաներ | Ավստրալիա | առանդա | ավանդ. հավա-տալ., բող. և կաթոլ. քրիստ. |
| Դիերիներ | Ավստրալիա | դիերի | ավանդ. հավա-տալ., բող. և կաթոլ. քրիստ. |
| Կուռնաիներ | Ավստրալիա | կուռնաի | ավանդ. հավա-տալ., բող. և կաթոլ. քրիստ. |
| Կամիլառոներ և այլն | Ավստրալիա | կամիլառո | ավանդ. հավա-տալ., բող. և կաթոլ. քրիստ. |

[1] Ցավոք, օնաներն արդեն դասվում են անհետացող էթնոսների շարքին:

[2] Այսպես անվանենք պայմանականորեն: Ավստրալական էթնոսներին գիտնականները միավորում են շուրջ երեք տասնյակ ԷԼԸ-ների մեջ:

## ՉՈՒԿՈՏԱ-ԿԱՄՉԱՏԱԿԱՆ ԷԼԸ

| | | | |
|---|---|---|---|
| Չուկչիներ (չուկչեր) | Ռուսաստան | չուկչերեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |
| Կորյակներ | Ռուսաստան | կորյակերեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |
| Իտելմեններ | Ռուսաստան | իտելմեներեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |

## ՄԵԿՈՒՍԻ ԷԹՆՈՍՆԵՐ ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

| | | | |
|---|---|---|---|
| Բասկեր | Իսպանիա, Ֆրանսիա | բասկերեն | կաթոլիկ քրիստոն. |
| Այներ | Ճապոնիա | այներեն, ճապոներեն | բուդդայակա-նություն, ավանդական հավատալիքներ |
| Բուրիշներ (բուրիշկներ) | Հնդկաստան | բուրուշասկի | շիա մահմեդական. |
| Նիվխեր և այլն | Ռուսաստան | նիվխերեն | ավանդ. հավատալ., ուղղափառ քրիստ. |

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Атлас народов мира, М., 1964.
2. **Бромлей Ю., Подольный Р.,** Человечество-это народы, М., 1990.
3. **Брук С.,** Население мира. Этнодемографический справочник, М., 1986.
4. **Данилко Е.,** Народы России, М., 2015.
5. **Дьячок М., Шаповал В.,** Генеалогическая классификация языков, Новосибирск, 2002.
6. **Иванов В.,** Генеалогическая классификация языков. Лингвистический энциклопедический словарь, М., 1990.
7. Классификация языков и московская школа компаративистики. «Полит.ру», «Вести FM», 2011, http://polit.ru/article/2011/02/22/starosrin/.
8. **Коряков Ю.,** Атлас кавказских языков, М., 2006.
9. **Коряков Ю., Майсак Т.,** Систематика языков мира и базы данных в интернете. Труды международного семинара «Диалог 2001» по компьютерной лингвистике и ее приложениям. Том 2, М., 2001.
10. Народы и религии мира. Энциклопедия, М., 2000.
11. Народы России. Энциклопедия, М., 1994.
12. Основы этнологии. Под ред. **В.В. Пименова,** М., 2007.
13. **Старостин Г.,** Как создается единая классификация языков мира. Публичные лекции «Полит.ру», 2010. http://video.polit.ru/lecture_2010_12_16.mp3.
14. **Campbell L.,** Historical Linguistics. An Introduction. Edinburgh. University Press, 2013.
15. **Gordon R.**(ed), Ethnologue: Languages of the World. Fifteenth Edition. Dallas, Texas: SIL, 2005.

16. **Dalby D.**, The Linguasphere Register of the World's Languages and Speech Communities. Vol. 1-2. Hebron, 2000.
17. https://www.ethnologue.com/browse/names.

**Асмик Арутюнян, Краткая этнолингвистическая и конфессиональная характеристика населения мира, -** Этнологическое изучение народов мира требует их научной классификации. Ее приемы разнообразны и разработаны на основе этнологических методов и смежных наук. Различные виды классификаций позволяют систематизировать народы и их группы по широкому кругу признаков: географическому, антропологическому, религиозной принадлежности и другим. В данной статье сделана попытка представить население мира с точки зрения их этнолингвистической и конфессиональной классификации. Рассмотрены основные этноязыковые семьи, около 400 этносов, указаны основные страны их проживания, родные языки и религии, которые исповедуют эти народы.

**Hasmik Harutyunyan, The Brief Ethno-Linguistic and Religious Characteristics of World Population, -** The main aim of this paper is to introduce the ethnic groups of the world. The people of the world are classified on the basis of their ethno-linguistic and relgious belonging. The suggested classification includes the main ethno-linguistic families /groups/ sugroups and about 400 ethnic groups. Countries, where they live, their mother tongues and religions are also indicated in this list.

**Հասմիկ Հարությունյան -** ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու: